ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/298

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.10.2021թ. թիվ 26/26-1/17753-2021 գրությամբ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 20.10.2021թ. թիվ 025/1003 գրության հիման վրա, 29.10.2021թ. թիվ 26/26-1/17753-2021 գրությամբ նախաձեռնել է «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/298 ընթացակարգի շրջանակներում 04.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.10.2021թ. թիվ 025/1003 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/44 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Մ.Բուատ», «ԼԵՎ-ՇԻՆ» և «Արհովշին» ՍՊ ընկերությունները, որոնց հայտով ներկայացված հայտերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի բոլոր տողերի ընդամենը գումարները սխալ են կան թվաբանական սխալներ, բացառությամբ թիվ 10 կշռի երկրորդ տողի:

Թիվ 2-րդ կշռի երկրորդ տողի և թիվ 4-րդ կշռի երկրորդ տողի քանակը գրված է սխալ:

Բոլոր կշիռների ընդամենը գները չեն համապատասխանում տվյալ կշռի համար մասնակցի կողմից ներկայացրած տոկոսներին:

Մասնավորապես «Արհովշին» ՍՊԸ կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին և 9-րդ կշռի առաջին տողում կան թվաբանական սխալներ՝ ընդամենը գինը հաշվարկված է սխալ:

Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության թիվ 1 որոշմամբ կասեցվել է գնահատող հանձնաժողովի նիստը և մասնակիցների ծանուցվել է ոչ ավտոմատ ծանուցմամբ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

«Մ. Բուատ» ՍՊԸ-ն և «Արհովշին» ՍՊԸ-ները շտկել են անհամապատասխանությունները:

Քանի որ տեխնիկական սխալի պատճառով ծանուցումը ուղարկվել է ոչ թե «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին այլ մեկ այլ ընկերության:

Գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության թիվ 3-րդ որոշմամբ նորից կասեցվել է գնահատող հանձնաժողովի նիստը և ոչ ավտոմատ ծանուցմամբ ծանուցվել է «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին հայտում առկա անհամապատասխանությունների մասին:

«ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները, որը հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) կետի խախտման:

Խնդրում ենք «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/298 ընթացակարգի շրջանակներում 04.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/298 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/298 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, բացառությամբ իր կողմից լրացված ծավալաթերթ-նախահաշվի, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր տողերի ընդամենը գումարները սխալ են՝ կան թվաբանական սխալներ, բացառությամբ թիվ 10-րդ կշռի երկրորդ տողի: Թիվ 2-րդ կշռի երկրորդ տողի և թիվ 4-րդ կշռի երկրորդ տողի քանակը գրված է սխալ: Բոլոր կշիռների ընդամենը գները չեն համապատասխանում տվյալ կշռի համար մասնակցի կողմից ներկայացրած տոկոսներին:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ ծանուցվել է իր կողմից ներկայացված հայտում անհամապատասխանությունների վերաբերյալ, սակայն տեխնիկական սխալի պատճառով ծանուցումը ուղարկվել է այլ ընկերության: Փաստացի ընկերությունը չի ստացել անհամապատասխանությունները շտկելու ծանուցումը, և որոշում կայացրել կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 18.10.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.10.2021թ. թիվ 26/26-1/17753-2021 գրությունը, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի 20.10.2021թ. թիվ 025/1003 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***<u>հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***<u>, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն</u>***

<u>օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u> Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***<u>11.10.2021թ.</u> նիստի թիվ 2 արձանագրության համաձայն***՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, բացառությամբ իր կողմից լրացված ծավալաթերթ-նախահաշվի, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր տողերի ընդամենը գումարները սխալ են՝ կան թվաբանական սխալներ, բացառությամբ թիվ 10-րդ կշռի երկրորդ տողի: Թիվ 2-րդ կշռի երկրորդ տողի և թիվ 4-րդ կշռի երկրորդ տողի քանակը գրված է սխալ: Բոլոր կշիռների ընդամենը գները չեն համապատասխանում տվյալ կշռի համար մասնակցի կողմից ներկայացրած տոկոսներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝

մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ ծանուցվել է իր կողմից ներկայացված հայտում անհամապատասխանությունների վերաբերյալ, սակայն տեխնիկական սխալի պատճառով ծանուցումը ուղարկվել է այլ ընկերության: Փաստացի ընկերությունը չի ստացել անհամապատասխանությունները շտկելու ծանուցումը, և որոշում կայացրել կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ***18.10.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և

պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահնմանված է, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու իմպերատիվ պահանջ, որի չպահպանման դեպքում, կարող են անտեսվել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը և հանգեցնել սխալ մեկնաբանման:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված

այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***<u>նույն օրը</u>*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մինչդեռ՝ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Ընկերությունը նույն օրը՝ ***<u>11.10.2021թ.,</u>*** ծանուցվելու փոխարեն ծանուցվել է ***<u>18.10.2021թ.:</u>***

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից Կարգով սահմանված իմպերատիվ պահանջների խախտմամբ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն իրականացնելու արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով

պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.10.2021թ. թիվ 26/26-1/17753-2021 գրությամբ «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**